ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 108 - Ա
04 հուլիսի 2013 թ

ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Ծովասար համայնքի ղեկավարին՝

1) Խիստ ուշադրություն դարձնել համայնքի բյուջեով նախատեսված հարկերի գանձման աշխատանքներին,կատարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները:
2) Դրամարկղային գիրքը վարել «Դրամարկղայի գործառնությունների մասին» ՀՀ օրենքնի 5-րդ հոդվածի պահանջով:
3) Միջոցներ ձեռնարկել քաղաքացիների կողմից չվճարված հարկերը գանձելու ուղղությամբ:
4) Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով, ձեռնարկել համապատասխան միջոցներ և սահմանված կարգով համայնքի բյուջեյում նախատեսել համապատասխան գումար համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը մշակելու համար: Ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրել ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1473-Ն որոշմամբ սահմանված կարգով, ճարտարապետաշինարարական նախագծերը համաձայնեցնել ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N 812 որոշմամբ սահմանված կարգով: Շինարարության թույլտվություն տրամադրել ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված կարգով, ավարտված շինարարության շահագործման փաստագրում ձևակերպել ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման հաստատված կարգով:

5) Հաստատել ներհամայնքային առևտրի կանոնները և ուղարկել պետական փորձաքննության:
6) Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողությունն իրականացնել "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17[1] հոդվածի պահանջներին համապատասխան:
7) Համայնքի ղեկավարի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ մարզպետարան ներկայացնել հաշվետվություն "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան:
8) Ղեկավարվելով ,,տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1[1] կետի պահանջով համայնքի ղեկավարի կողմից ընդունած որոշումները 2-օրյա ժամկետում տրամադրել համայնքի ավագանու անդամներին և փակցնել բնակչության համար տեսանելի վայրում:
9) Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից ընդունած իրավական ակտերը իրենց վերնագրերով, ներածական մասով,կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով և ժամկետայնությամբ համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37,40,41-րդ հոդվածների պահանջներին:
10) Ղեկավարվելով ,,տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով գյուղապետի որոշմամբ հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը:
11) Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2012թթ. հաշվառման մատյանները:

2. Սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 31-ը:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ